

Իրավունք մշակույթ

Չկա Հասարակության
առանց իրավունքի
Ubi societas ibi jus

Երկշաբաթեր
թիվ 17 (20)
2007 թ. դեկտեմբերի 30

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԲ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԲ ՉԵՁ ԵՒ ՄԵՁ ՄԵԾ ԱԲԵՏԻՍ



Սիրելի եղբայրներ ու քույրեր
Սիրելի հայրենակիցներ
Թույլ տվեք Հայկական սահմանադրական
իրավապաշտպան կենտրոնի անձնակազմի,
«Վասն արդարութեան» համեմատելի և «Իրավա-
կան մշակույթ» երկշաբաթաթերթի խմբագրու-
թյան կողմից շնորհավորել ձեզ քրիստոնյա աշ-
խարհի հիրավի ամենամեծ, ամենանշանակա-
լից տոնի մեր ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԻՐ
ԾՆԱԳՅԱԼ տոնի առթիվ:

Բոլորս մշտապես ձգտում ենք մեր մտերի-
ներին ու հարազատներին, հատկապես հա-
տուկ առիթներով, կամենալ կամ նվիրել լավա-
գույնը, ամենամոթեցավորը և, իհարկե, մնա-
յունն ու, եթե հնարավոր լինի, հավերժականը:
Եվ դա բնական է:

Ո՞րն է այդ մնայունը, անմահականն ու հա-
վերժականը, որ ցանկամ ձեզ եղբայրներիս ու
քույրերիս:

Անշուշտ, դրանք երկրային ժամանակավոր
ու անցողիկ, կորստյան ենթակա արժեքները
չեն հարստությունը, ունեցվածքը, աշխարհիկ
զվարճությունները, անգամ մարմնական
առողջությունը, ինչպես համոզիչ կերպով քա-
րոզեց քահանան: Դրանք անանց ու մնայուն,
հավերժական արժեքները՝ հավերժական ու-
րախությունն ու հավերժական երջանկությունն
են, որ Փրկիչն Անձամբ, իր անճառելի խոնար-
հությամբ իջնելով, ավետեց ձեզ իր Ավետարա-
նով: Ուստի այդ ՄԵԾ ԱՎԵՏԻՍԻ կապակ-
ցությամբ ուզում ենք մտրել ձեզ Փրկչի բերած
ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՇԵՋ ՀՈՒՅՆՈՒ ՌԻ ՀԱՎԱՏԵ:

Երբ մեզանում անասան են այդ հույսն ու
հավատը, մեր եղբայրությունը երկրային կյան-
քում էլ կատարյալ է, քանզի մահն անգամ չի
կարող խաթարել այն: Իսկ երբ խաթարվում են
այդ հույսը, հավատն ու սերը, մենք պարզա-
պես «կենդանվումս մեռած» ու օրավոր սաստ-
կացող սարսափով սպասում ենք մեր տխրա-
մած կյանքի այն օրվան, երբ հողի մեջ ամփոփ-
վելու հերթը կհասնի մեր մարմիններին:

Չլինենք այդ օրվան սպասող, ԻՐԱՎԱՆ

ԿՅԱԼԹԻ քաղցրությանն անհաղորդ: Այդ ան-
հաղորդությունն ու հուսահատությունն անհա-
վատությունն է, որ մեզ դարձնում է այնչափ ըն-
չաքաղց ու անմիտ, որ անգամ մեզ ու մեր հա-
րազատների համար վաղօրոք ընդարձակ գե-
րեզնմատեղեր ու շիրմաքարեր ենք պատ-
րաստում, քանզի այդ ենք համարում վերջն ու
մնայունը...

Սիրելի եղբայրներ ու քույրեր:
Մեր մարմինների դարձն ի հող, սակայն, վեր-
ջն է:

Եկեք չլինենք կրապաշտ ու հուսաբեկ:
Եկեք ամեն օր ընթերցենք Աստվածաշունչ
մատյանն ու կիսմանք, մեր հոգու աչքերով
կտենենք Բարի լուրը, կհավատանք Փրկու-
թյանը, հավերժական կյանքի գոյությանն ու
հնարավորությանը, որի ավետիսը 2008 տարի
առաջ մեզ բերելու համար մարդեղացավ Հի-
սուս Քրիստոսը, և հենց Նրա Մուրը Ծննդյան
տոնն է նշվում այսօր աշխարհի բոլոր ծագե-
րում:

Ուստի եկեք անիրազեկ լինելով միմյանց
բարեկեցի չասենք՝ «Շնորհավոր մեր սուրբ
ծնունդը», քանզի սուրբ ծնունդ տիեզերքի
պատմության մեջ եղել է միայն օձյալ Տիրոջ
Հիսուս Քրիստոսի ծնունդը՝ Հրեաստանի
Բեթղեհեմ քաղաքում, 2008 տարի առաջ,
Մուրը կույս Մարիամ Աստվածածնից:

Մենք կարող ենք միմյանց շնորհավորել ինչ-
պես ցանկամանք, օրինակ՝ ասելով՝ «ՇՆՈՐՀԱՎՈՐ
ՎՈՐ ԱՌԻՐ ԾՆՈՒՆՆԻ» և ի պատասխան կրկնել
նույնը կամ ավելի կարճ՝ «ՇՆՈՐՀԱՎՈՐ» կամ
«ԱՄԵՆ», կամ որևէ այլ կերպ, բայց չասենք
«Չերն էլ»: Սա ընդամենը սովորության հարց է:

Եկեք նաև մեր հրապարակներում անգիտու-
թյամբ, կռապաշտների օրինակով տարբեր
կենդանիների՝ շների, օձերի, առնետների ու
հիմա էլ մկնիկների արձաններ ու խրտվիլակ-
ներ չխոյանենք, դրանք չստանենք մեր տներն
ու ուրախանանք դրանցով՝ մոլորեցնելով նաև
մեր երեխաներին: «...Ուրախանում էին իրենց
մեռելով շինված այլ կուռքով» (Գործք, 7:41):


Այս օրերին ամենուրեք, այդ թվում՝ լրատվա-
միջոցներով ճանաչված ընկերություններ ու
անհատներ շնորհավորում ու փառաբանում,
զովագրում են միմյանց «սուրբ ծնունդները»:
Եվ գրեթե ոչ ոք, թերևս բացի Վեհափառ Հայ-
րապետից ու մյուս հոգևորականներից, Հրեյ-
յարի անունը չի տալիս: Ինչու: Ամաչում ենք
Տիրոջ՝ Տիեզերքի ու մեր Արարչի անունը տալ,
միմյանց ասել՝ «Շնորհավորում ենք մեր Տի-
րոջ՝ Հիսուս Քրիստոսի Մուրը Ծննդյան տոնի
կապակցությամբ»: «Ով որ ամբ համարի ինձ
և իմ խոսքերը... մարդու Որդին էլ նրան պիտի
անաչեցնի, երբ գա փառքովս իր Հոր և սուրբ
հրեշտակների» (Մարկոս, 8:38): Ուստի եկեք
երկրալուծությամբ ու խոնարհությամբ ակամ-
ջալուր լինենք Աստվածային խոսքին ու նաև
մեծ բանաստեղծի, ավաղ, դեռևս չընկալված
իմաստուն խորհրդին:

Շնորհավոր Մուրը Ծնունդ:
Քրիստոս ծնա եւ յայտնեցաւ:
Չեզ եւ մեզ մեծ Աւետիս:

ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՁԱՅՆ ՄԵԾՈՒՑ

Քննեցե՛ք ձեր սիրտը
և նայեցե՛ք, թե կա՞
արդյոք այնտեղ հա-
վատ, որով պիտի կեն-
դանան մեր այդ
հոգևոր ճայաստանը.
Եթե չկա, ապա զուր
են ձեր ջանքերը նյու-
թական ճայաստանի
համար... Նա չի կեն-
դանան, նա հոգով



ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

միայն կարող է կենդանի լինել:
Ես հավատում եմ, կլինի հոգևոր ճայաստանը, կեն-
դանի կլինի մեր հայրենիքը, ուրեմն կենդանի կլինի
և այն ճայաստանը, որի համար մեր ժողովուրդը թա-
փում է այսօր իր արյունը:

Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր Ո Ւ Մ

- Իմ բաժին քարը Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքին _____ էջ 2
- Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում _____ էջ 2
- Բարեմադքանքներ Մուրը Ծննդյան տոնի և Ամանորի առթիվ _____ էջ 3
- Իրավական ակտեր _____ էջ 4
- Խորեն սրկ. Մանուկյան. «Ամանորի հաստատման պատմությունից» _____ էջ 5
- Պոեզիայի խորհուրդն ըստ Հրաչյա Սարուխանի _____ էջ 6
- Ջանիբեկ Դուկայան. «Բարձունքում հիշիր իջնելու մասին» _____ էջ 6
- Սուրբ Նիկողայոս հայրապետի վարքը _____ էջ 7
- Ընթերցողների հարցերին պատասխանում է Տեր Շմավոն քահանա Դևոնյանը _____ էջ 7
- Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ _____ էջ 8

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

ԻՄ ԲԱԺԻՆ ԶԱՐԸ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՊՐՈՅԻ ԸՆԵՔԻՆ

2007 թվականի դեկտեմբերի 11-ին Վանաձոր քաղաքի կենտրոնական պողոտայի վրա (Տիգրան Մեծի 1) տեղի ունեցավ Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքի կառուցումն ազդարարող ցուցանակի բացման հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում ելույթ ունեցած հանրապետության ու մարզի, միջազգային կազմակերպությունների ղեկավարներն ընդօրինակ դպրոցի առանձնահատուկ կարևորությունը:



Այս տարի կենտրոնական շենքի շինարարությունը, որին իր աջակցությունը կարող է բերել յուրաքանչյուր ոք՝ իր բաժնի քարը (ընդամենը 250 դրամ) դնելով Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքին: Հիրավի, մարդու իրավունքները համընդհանուր ընտյ՞ր ունեն: Եվ մարդու իրավունքների շենքն էլ համընդհանուր ջանքերով կկառուցվի:

Առաջին պատահիրները եղան՝
1. Ա. Հակոբյան ՄՊԸ կոլեկտիվը՝ նախագահ Արթուր Հակոբյանի գլխավորությամբ (165 քար՝ մեկական քար յուրաքանչյուր աշխատողի կողմից՝ 41.250 դրամ)
2. Արտուշ Հովսեփյան՝ Վանաձոր քաղաքի բնակիչ (4 քար՝ իր ընտանիքի կողմից՝ 1.000 դրամ)
3. Ռոբերտ Հարությունյան (20 քար՝ իր ընտանիքի կողմից՝ 5.000 դրամ)
ՀՄԻԿ նախագահության, աշխատակազմի և շահառուների անունից հայտնում ենք խորին երախտագիտություն Մարդու իրավունքների կրթության զարգացմանը նպաստելու համար:
Ըստ ՄԻԿ-ի շենքի կառուցման նախահաշվի՝ անհրաժեշտ է 440.880.000 դրամ կամ 1.763.520 քար:

ՆԿԻՐԱԲԵՐՎԵԼ Է 189 քար
ՄԱՅԵԼ Է 1.763.331 քար

ՄԵՐԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԸ

Նոր օրենք ընդդեմ լրատվամիջոցների «հանցավոր գործողությունների»

Դեկտեմբերի 11-ին Իրաքյան Քուրդիստանի տարածաշրջանային կառավարության խորհրդարանն ընդունել է մամուլի մասին նոր օրենք, որն ուղղակի սպառնալիք է խոսքի ազատությանը և ժողովրդավարությանը: Օրենքը դեռևս պետք է հրապարակվի և ստորագրվի ՔՏԿ նախագահ Մասուդ Բազազանի կողմից, սակայն քրդական լրատվամիջոցների ներկայացուցիչներն արդեն իսկ խիստ մտահոգություն են հայտնել օրենքի հնարավոր հետևանքների առնչությամբ:

Նոր օրենքը Իրաքյան Քուրդիստանում մամուլի ազատության սահմանափակման տեսանկյունից երբևէ ընդունված ամենախիստ օրենքն է, որը թույլ է տալիս կառավարությանը թերթերից զանգվածային տուգանքի չափը հասցնել մինչև 10 միլիոն իրաքյան դինարի (8.200 ԱՄՆ դոլար) և անգամ ձերբակալել լրագրողներին՝ երկրի պաշտոնյաներին վիրավորանք հասցնելու, վախի մթնոլորտ ստեղծելու և նման այլ «հանցավոր գործողությունների» համար: Մինչդեռ կարելի է ենթադրել, որ տուգանքների բուն նպատակն ամենայն հավանականությամբ անկախ թերթերի տնտեսական կայունության խաթարումն է, հետևաբար նաև՝ վերջիններիս լրատվական դաշտից դուրս մղելը:

Մամուլի մասին նոր օրենքը սպառնում է խախտել լրատվամիջոցների ազատության միջազգային չափանիշները:

ստանում բավարար դատական աջակցություն կամ իրավական պաշտպանություն, քանի որ դատական համակարգը կռուսմացված է, և հողի մասին օրենքը պատշաճ կերպով չի կենսագործվում: Դեռ ավելին, տուժածների իրենց հողը ու մարդկային իրավունքները պաշտպանելու ու վերականգնելու բոլոր փորձերն ու ջանքերը հաճախ ավարտվում են նրանց կալանավորումներով:
Ներկայացուցչի դիտողություններին հետևել է դեկտեմբերի 12-ին Կամերոջայի վարչապետ Գոն Սեմին հայտարարությունը, որում նա Քենիայում սահմանադրական իրավունքի ճանաչված պրոֆետոր, 2005 թ.-ից ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Ղայիին անվանել է «մարդու իրավունքների զոհաբաշտիկ» և խոստացել երբեք չհանդիպել նրա հետ:

1991 թ. Փարիզյան համաձայնագրով նախատեսված է Կամերոջայում մարդու իրավունքների ոլորտում իրավիճակի դիտորդման նպատակով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից հատուկ ներկայացուցչի նշանակումը: Որպես խաղաղության փարզիկ համաձայնագրի և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պայմանագրերի մասնակից Կամերոջան պարտավորվել է հարգել ու պաշտպանել իր քաղաքացիների իրավունքները:



թ.-ից գտնվել է դատաբանության ընթացքի մեջ:
«Ցավալի է, որ Գոն-գարիան դեռևս պատկանում է այն երկրների շարքին, որոնց քաղաքացիները, այդ թվում՝ լրագրողները, պատժվում են գաղտնի տեղեկույթի հրապարակման համար»,- ասել է Հարագրին ավելացնելով, որ ժողովրդավար երկրում պետական գաղտնիքների մասին տեղեկույթի արտահոսքի համար պատասխանատվություն պետք է կրեն միայն դրանց պահպանման համար պաշտոնապես նշանակված անձինք: Ուստի ԵՄԿԶ ներկայացուցիչը կոչ է արել Գոն-գարիայի իշխանություններին սահմանափակել գործող քրեական օրենքի կիրառության շրջանակները գաղտնի տեղեկույթի արտահոսքի համար պատասխանատվության ենթարկելով միայն պաշտոնյաներին և հաստատել այնպիսի դատական համակարգ, որը համաձայն կլինի տեղեկավարության ազատության իրավունքին:

ՄԱԿ-ը կոչ է անում վերացնել մահապատիժը



Մահապատիժ դեմ մղվող համընդհանուր քարոզարշավը շրջադարձային հարթեանակ արձանագրեց, երբ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը ընդունեց մահապատիժ վերացման իր կոչը:
ՄԱԿ-ի 104 անդամ երկրներ

քվեարկել են հոգուտ այս կոչի, 54 երկրներ դեմ են քվեարկել, իսկ 25 երկրներ ձեռնպահ են մնացել:
Միջազգային համաձայնությունը կազմակերպությունը ողջունել է Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում ընդունված այս պատեհաժամ կոչը որպես մահապատիժ աշխարհում սակառ վերացնելու միջազգային միտում:
Ընդհանուր խաձամբ 133 երկրներ աշխարհի բոլոր տարածաշրջաններից վերացրել են մահապատիժ օրենքով կամ գործնականում, և միայն 25 երկրներ են մահապատիժներ իրականացրել 2006 թ.: Մահապատիժների 91%-ն իրականացվել է հետևյալ վեց երկրներում՝ Չինաստան, Իրան, Իրաք, Պակիստան, Սուդան և ԱՄՆ: 2006 թ. աշխարհում արձանագրված մահապատիժների քանակը նվազել է ավելի քան 25%-ով:

2006 թ. աշխարհում արձանագրված մահապատիժների վրա դրված ՄԱԿ-ի արգելքն օրենքով պարտադիր չէ, այլ բարոյական և քաղաքական ներգործության մեծ ուժ ունի: Այն կարևոր գործիք է քաջալերելու մյուս երկրներին՝ վերանայելու մահապատիժի կիրառումը:
2008 թ. հոկտեմբերին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը Գլխավոր վեհաժողովին կեղևելուց անդամ երկրներում սույն որոշման իրականացման վիճակի մասին:

ՆԻՋԵՐԻԱ

Գաղտնի մահապատիժներ կալանավայրերում



2007 թ. նոյեմբերի 15-ին ՄԱԿ-ում Նիգերիայի Կառավարության ներկայացուցիչը հավաստել է, որ երկրում վերջին տարիների ընթացքում մահապատիժ չի իրականացվել, և նշել է, որ պատիժ է սահմանվում միայն համապարփակ իրավական և դատական ընթացակարգերից, այդ թվում՝ երկրի գերագույն դատարանին դիմելուց հետո:

Սակայն Միջազգային համաձայնություն կազմակերպության կողմից բացահայտվել է, որ չնայած կառավարության հակադրած պնդումներին՝ Նիգերիայի կալանավայրերում, այնուամենայնիվ, գաղտնի մահապատիժներ են իրականացվել: Վերջին երկու տարիների ընթացքում կազմակերպությանը հայտնի է դարձել մահապատիժների առնվազն վեց դեպքի մասին, սակայն մտավախություն կա, որ դա դեռևս վերջնական թիվը չէ:

OSCE

Արդարացվել է լրագրողը

Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵՄԿԶ ներկայացուցիչ Միջևոս Հարագրին ողջունել է հունգարական դատարանի կողմից ճանաչված լրագրող Ռադիի արդարացումը և կոչ արել Հունգարիայի իշխանություններին բարեփոխել պետական գաղտնիքների հրապարակման մասին օրենսդրությունը: Գաղտնիության պահպանման խախտման մեջ մեղադրվող Անտոնիա Ռադիի գործը 2003

ԱՄԻԱ

Մարդու իրավունքների առաջատար կազմակերպություններն աջակցում են Կամերոջայում ՄԱԿ-ի ներկայացուցչին

Մարդու իրավունքների հինգ առաջատար միջազգային կազմակերպություններ Մարդու իրավունքների դիտակը, Մարդու իրավունքների ասիական համեմատողը, Մարդու իրավունքների և զարգացման ասիական ֆորումը, Մարդու իրավունքների միջազգային դաշնությունը և ԸՆԴ-դեմ խոչընդոտման համաշխարհային կազմակերպությունը, խոր մտահոգություն են հայտնել Կամերոջայում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի Մարդու իրավունքների հարցերով հատուկ ներկայացուցիչ, պրոֆետոր Չաշ Ղայիի հետ համագործակցելու Կամերոջայի կառավարության անպատասխանական առնչությամբ և կոչ արել կառավարությանը հարգել մարդու իրավունքների ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև դրանք վերահսկման համար նշանակված պաշտոնյաներին:

Դեկտեմբերի 10-ին մամուլ ասուլիսի ընթացքում, հատուկ ներկայացուցիչը մտահոգություն էր հայտնել, որ կառավարությունը «զարգացման» քողի ներքո արդարացում է Կամերոջայի քաղաքացիական և գյուղաբնակ աղքատների հողի և ունեցվածքի համատարած անօրինական բռնագրավումը: Նա նաև նշել է, որ քաղաքացիները չեն

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ ՍՈՒՐԱ ԾՆԵԴՅԱՆ ՏՈՒՑ ԵՎ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ



Իմ ժողովրդին, իմ երկրին, իմ պետությանը նրանք և առաջ խաղաղություն են ցանկանում, մարդկանց աշխատանք և հավատ: Մեր ժողովուրդը Հարավային Ասիայի շարունակ դրսևանել է իր հավատի ու պայքարի շնորհիվ... Թող 2008 թվականը երջանիկ տարի լինի բոլորին համար:

Էդգար Միրզայան
ՀՀ ժողովրդական արտիստ կոմպոզիտոր

Նախ խաղաղություն են ցանկանում իմ ստեղծագործ ժողովրդին, և քանի որ 2008 թվականին մեզ փորձություններ են սպասվում, արվեստի և համերգային բնույթի: Թող ընտանիքներն ընթանան արգասիք սպասաններում, իսկ միջազգային ապարհում Հայաստանը բարձունքների հասնի, և մեր արդար պայքարը հաղթանակով պատվի:

Ռուբեն Գևորգյան
կինոռեժիսոր
Հայաստանի Կինոֆիլմային Նախագահ
«Հայկ» կինոստուդիայի տնօրեն




Նախ ուզում եմ շնորհակալ լինել Հայ ազգի, ներառյալ Միջուկի Նոր Տարին: Թող Հայ ազգը միշտ բարգավաճի, միտանական լինի մենք կհաղթենք ամբողջ աշխարհին... Նու ուզում եմ խոնարհվել այն զինվորների առաջ, ովքեր պայքարեցին հանուն մեր պատանության, խոնարհվել նրանց մայրերի, հայրերի առաջ: Շնորհակալ Նոր տարի:

Վանա Համաբյան
ՀՀ ժողովրդական արտիստ



Ինչպե՞ս է լինում, երբանում, երբանում, երբանում... Թող լինի այնպես, որ 2007 թ. զգալիորեն լավ պատմությունները մնան հետում, և 2008-ը Հայ ժողովուրդը դիմադրելով լավ արամադրություններ, և ամենակարևորը, արվեստը բարգավաճի: Հայաստանի իրավասու մարմինները վերջի վերջ ուղղություն դարձնեն և գնահատեն մեր ազգային օպերային արվեստը, գնահատեն մեր ձայները՝ մեր գանձերը, մեր դասականը:

Վահան Միրզայան
ՀՀ ժողովրդական արտիստ



Շնորհակալ եմ մեր թերթի բոլոր ընթերցողներին և ցանկանում, որ իրավական մարմինները հարգեն մեր իրավունքները և մշակույթի գործիչներին ստեղծածը Հարավային Ասիայի շարունակ դրսևանել է իր հավատի ու պայքարի շնորհիվ... Թող 2008 թվականը երջանիկ տարի լինի բոլորին համար:

Ազատ Գասպարյան
ՀՀ ժողովրդական արտիստ

Թող նախ և առաջ խաղաղություն լինի: 2008 թ. մշակույթային տարի լինի՝ արվեստով լի: Մարդկանց սրտերում ալիքի շատ արվեստ լինի: Մենք այսօր կարծես հեռացել ենք մեր մշակույթի ակունքներից, իսկ երիտասարդներն օտար, ցածրարժեք «արվեստ» են ընդունում: Բայց ու՞ր մնաց մեր ազգային գարավոր մշակույթը: Ես ցանկանում եմ՝ 2008 թ. լավ ընկերներ ձեռք բերելու տարի լինի:

Անդրանիկ Հարությունյան
Կոմիտասի անվ. կամերային սան տնօրեն

Մերելի՛ Հայրենակիցներ, սրտանց շնորհակալ եմ Սուրբ Ծնունդը և Նոր տարին: Թող գալիք տարին լինի չիրագործված հույսերի իրականացման, համերաշխության, խաղաղության և սիրտ տարի: Ուր էլ որ լինեն մեր թոռներն ու ծոռները, մեծանուն հայկական մշակույթի և ազգային ավանդույթների միջնորդություն: Յուրաքանչյուրի համար Հնարավորություն ստեղծվի իր ունակությունները միայն Հայաստանում ներգնելու համար: Որ երբեք ոչ ոք չկորցնի իր պիտանի լինելու գզացողությունը: Երջանիկ Ամանոր եմ ցանկանում:

Ռաֆայել Միրզայան
ՀՀ ժողովրդական արտիստուհի երգչուհի


Դառնացած ասրելը հավաքանց դժվար է: Ես ցանկանում եմ, որ 2008 թ. մարդիկ չբարձրանան, որ թիվն ամենամեծ յուրաքանչյուր հարցի, միմյանց հանդիպելու ժպտան և բարին ցանկանան միմյանց:

Արմեն Մելքոնյան
ռեժիսոր, ԵԹՎՊԻ-ի ամբիոնի վարիչ պրոֆեսոր

Նախ՝ շնորհակալ եմ «Իրավական մշակույթ» երկշաբաթյա թերթի ընթերցողներին Ամանորի կապույտություն: Թերթն ունի որոշակի առաքելություն, բազմապիսի է, բազմաբնույթ, անդրազանգում է մարդու իրավունքներին, մշակույթին, Հոգևոր կյանքին ու պատմությանը, նպաստում է քաղաքացիական հասարակության ձևավորմանը... Այսօր մամուլը հեղեղված է մակերեսային հոգեվաճակով, ընթերցողները մտա աչք


բացը լրացվում է ձեր թերթի միջոցով, իրենց խոր գիտարկումներով ու բազմազանությամբ աչքի ընկնող հոդվածներով: Ամենայն բարիք խնդրակազմին, որ նույն հավատով ու ավելանով կատարի իր առաքելությունը: 2008 թ. թող ընթերցողները լուսավորված լինեն արևով և «Իրավական մշակույթ»-ով:

Անետա Երզնկյան
կինոգետ, ԵԹՎՊԻ-ի պրոդյուսեր պրոֆեսոր



Հայ ժողովրդի ցանկանում եմ կրկեսային երկարակետային լուսավորություն: Ովքեր ուզում են երկարապարհ, թող գան մեզ մտա՝ կրկես: մենք հատուկ դասընթացներ ունենք նրանց երիտասարդացնելու, գեղեցկացնելու և բարձր արժանատիություն նվիրելու մեր ուրախ ձեռնամուխների, արտիստների վարպետության շնորհիվ: Ձե՛ք որ ամեն ինչի հիմքը շարժում է, ուրախ և երջանիկ ծիծաղը: Անկախ տարիքից՝ եկեք կրկես, իսկ կրկեսում դուք կգտնեք ամեն ինչ... անգամ ձեր մանկության ճեքերին ու երազը:

Սոս Պետրոսյան
Երևանի Պետական կրկեսի տնօրեն ԵԹՎՊԻ-ի պրոֆեսոր



2008 թ. տհաճ, անտանելի, մեր ազգի հոգուն ու ապրելակերպին, մեր արժանապատվությանն ու իմաստությանն ու իմաստությանն անհարկեր թող չլինի: Իրականություն թող դառնա մեր բոլոր սպասելիքները, մեր հույսերի խորաններում թող բոցկտա մեր հավատի ջահը՝ հիասթափությունը, հուսահատությունը տեղ ու ժամանակ չտալով... Հայտնի կառավարության շքեղացող տաճարի ժամացույցի զարկերի կոմիտասյան հոգեպարար երգի հնչյունները թող աշխարհում հավիտյան մեր ինքնությունը, մեր հզոր և նորոգ հայրենիքի իմաստուն գույությունը... Գալը բարի, 2008 թվական: Բոլոր նեղյալներին, տառապյալներին, աղքատներին, անտուն, անզավակ ու անձնող մնացածներին բարություն և անասճան սիրով պարտիր: Թող նրանք միխիթարվեն ու ապրեն արժանապատիվ կյանքով. աշխատավորին ու զանազան երանգ պարգևներ, նորոգի մեր հոգիները, լույսով լցրու մեր աչքերը, մեր ազգային ու բարությանը պահպանող-պաշտպանի մեր գինիորներին: Աշխարհին խաղաղություն, շնորհակալ Ամանոր և Սուրբ Ծնունդ:

Ռուբեն Մարուկյան
արձակագիր, գրամատուց, ռեժիսոր, պրոֆեսոր




2008-ը թող լինի մեր երկարատև մաքսուսների արդյունքն ու ճանաչման տարի, թող Հայ մայրերն իրենց գալականներին մեծացնեն հայելի միջավայրում, երիտասարդներն ազգային մտածողություն ունենան և չկորցնեն ազգային արժեքները, երկրում պաշտպանվեն մարդու իրավունքները և, վերջապես, գնահատվի աշխատավոր մարդը:

Մարինե Մխիթարյան
գեթանուհի, ԵԹՎՊԻ-ի գասախոս

Ամանորը եզակի տոն է, որը մանուկներին ու պատանիներին ուրախություն է պարգևում, իսկ տարեցներին թախիծ է բերում, որովհետև նրանց կյանքից մեկ տարի էլ է հուշ դառնում: Ես բոլոր մարդկանց ցանկանում եմ, որ նրանց հոգում միշտ լինի երիտասարդացնելու, գեղեցկացնելու և բարձր արժանատիություն նվիրելու մեր ուրախ ձեռնամուխների, արտիստների վարպետության շնորհիվ: Ձե՛ք որ ամեն ինչի հիմքը շարժում է, ուրախ և երջանիկ ծիծաղը: Անկախ տարիքից՝ եկեք կրկես, իսկ կրկեսում դուք կգտնեք ամեն ինչ... անգամ ձեր մանկության ճեքերին ու երազը:

Սոս Պետրոսյան
Երևանի Պետական կրկեսի տնօրեն ԵԹՎՊԻ-ի պրոֆեսոր



Մեր Նոր Հայրենիքի մանկավարժ-բանաստեղծ Մուսես Խորենացու անվան մեդալակիր

Ես ուրախ եմ, որ Ամանոր և Սուրբ Ծնունդը: Թող գալիք տարին լինի գեղեցիկ տեսնելու և գնահատելու տարի: Մշակույթն ստեղծվում է դարերի ընթացքում, սակայն ալիքի ավանդույթը կարելի է մեկ տասնամյակում...

Բոլորին մաղթում եմ մշակույթային ավանդույթը, գասական արժեքներն ու մեծ կոմիտասի թողած ժառանգությունը ինամբով պահելու և այն շարունակելու գործընկեր ու ավյուն: Բոլորս պարտավոր ենք ժողովրդական երգն ու պարը ռաբիսի մաքրել:

Թող բոլորին համար 2008 թ. լինի խաղաղություն, առողջություն, հաջողություն, տարի: Լինենք բարի ու բարեհամար: Թող ժպտող երեք չպակասի մեր գեներացի:

Աննա Հեքեքյան
ԵԹՎՊԻ-ի դրոցեստ

Իրավական ակտեր

Հարգելի՛ ընթերցողներ

«Իրավական մշակույթ» թերթի խմբագրությունը որոշել է պարբերաբար ձեռք բերել և առօրյա խնդիրներին առնչվող, այդ հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր օրենքներ, որոշումներ, կանոնադրություններ կամ դրանց՝ քաղաքացու համար առավել կարևոր հատվածները: Այս կապակցությամբ ուրախ կլինենք լսելու և քննելու ձեր առաջարկները, ցանկությունները:

Նկատի ունենալով այն համաձայնությունը, որ 2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունենալու նախագահական ընտրություններ, ընտրական ընթացակարգերին քաղաքացիների իրազեկության բարձրացման նպատակով ստորև տպագրում ենք համապետական ընտրությունների ընթացքում ընտրվողների մասնակցելու համար քաղաքացու վերաբերյալ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես հանելու մասին դիմումի և համապատասխան տեղեկանքի սահմանված ձևերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐՎԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2007 թ. նոյեմբերի 24 N 171-Ն
թ. Երևան Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՔՎԵՆՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ԵՎ ՍՏՈՒՄՆԵՐԻ
ՏՎՅԱԼՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՈՂՄԵՆ ՀԱՆՏԵԼՈՒ ԵՎ
ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՎԱԿԱՆ ՏԵՂԵԿՆԵՐԻ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ԸՆԴՂՈՒՄԵՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԻՄԻՆԱԼ ԵՎ
ՏԵՂԵԿԱԿԱՆ ԶԵԿԵՐԸ ՍԱՀՄԱՆՔԵՆՈՒ ՍԱՄԻՆ

Դեկլարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է.

- 1. Սահմանել՝
ա) համապետական ընտրությունների դեպքում քվեարկությանը մասնակցելու համար քաղաքացու վերաբերյալ տվյալները ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես հանելու մասին դիմումի ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.
բ) հաշվառման վայրի ընտրողների ցուցակից քաղաքացու տվյալները ժամանակավորապես հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ տեղեկանքի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ազարյան

ՔՎԵՆՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ԵՎ ՍՏՈՒՄՆԵՐԻ
ՏՎՅԱԼՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՈՂՄԵՆ ՀԱՆՏԵԼՈՒ ՍԱՄԻՆ
Դ Ի Մ Ո Ւ Մ Ի Զ Ե Կ

(լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանում անվանումը)

Դ Ի Մ ՈՒ Մ

Հանրապետության նախագահի 2008 թ.-ի փետրվարի 19-ի ընտրությունների քվեարկությանը մասնակցելու համար խնդրում են իմ վերաբերյալ տվյալները ժամանակավորապես հանել

(մարզի, համայնքի անվանումը, հաշվառման վայրի հասցեն)

ընտրողների ցուցակից և ընդգրկել քվեարկության օրը ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում:
Քվեարկության օրը գտնվելու են

(նշվում է քվեարկության օրը գտնվելու մարզը, համայնքը և հասցեն)

Դիմող _____
(ազգանուն, անուն, հայրանուն)

(ստորագրություն)

2008 թ. _____ «-----»

Դիմումը կարող է ներկայացվել մինչև 2008 թվականի փետրվարի 12-ը:

Քաղաքացին դիմումը ներկայացնում է անձամբ՝ իր հետ ունենալով անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր):

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում սույն դիմումը հնարավորություն է ընձեռում ըստ գտնվելու վայրի մասնակցելու միայն Աժ համամասնական ընտրակարգով ընտրություններին:

Դիմումի ձևը տրամադրվում է լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանում կողմից:

ՀԱՆՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ
ՔՎԵՆՐԿՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՈՂՄԵՆ
ՀԱՆՏԵԼՈՒ ԵՎ ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՎԱԿԱՆ
ՏԵՂԵԿՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴՂՈՒՄԵՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Ի Զ Ե Կ

Քաղ. _____ ի
(ազգանուն, անուն, հայրանուն)

(ծննդյան տարեթիվ, ամիս, ամսաթիվ)

Անձնագիր _____
(սեռիս, համար, ում կողմից է տրված)

Հաշվառված _____
(մարզի, համայնքի անվանումը, հաշվառման վայրի հասցեն)

վերաբերյալ տվյալները ժամանակավորապես հանվել են

(մարզի, համայնքի անվանումը և հաշվառման վայրի հասցեն և ընտրական տեղամասի համարը)

ընտրողների ցուցակից և ընդգրկվել _____
մարզի _____ համայնքի,

_____ հասցեի, թիվ _____
ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

Լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանում հեղավար

(ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ. 2008 թ. _____ «-----»

Տեղեկանքը տրվում է միայն համապետական ընտրությունների դեպքում:

Քվեարկությանը մասնակցելու համար քաղաքացին տեղեկանքը, անձը հաստատող փաստաթղթի հետ միասին, քվեարկության օրը ներկայացնում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողով:

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում սույն տեղեկանքը հնարավորություն է ընձեռում ըստ գտնվելու վայրի մասնակցելու միայն Աժ համամասնական ընտրակարգով ընտրություններին:

ՄԱՐԿՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝

ՈՐՊԵՏ ՀՄԱՆԿ-ՀՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋՈՑ



2007 թ. դեկտեմբերի 10-ին Մարդու իրավունքների օրը, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի ունեցավ Մարդու իրավունքների դպրոցի «Մարդու իրավունքները որպես համընդհանուր զարգացման միջոց» վերնագրով դասընթացի շրջանավարտ ուսանողներին վկայականների հանձնման արարողությունը:

Դասընթացը կազմակերպել էր ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչությունը՝ Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի ՅՈՒՆԵՍԿՈ-ի Մարդու իրավունքների և ժողովրդավարության ամբիոնի արջակազմակերպիչ:

Միջոցառմանը հրավիրվածների կազմում էին Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր Սուրեն Զուլ-



յանը, ԱԳՆ Միջազգային կազմակերպությունների վարչության պետ Չյուրիկ Աղաջանյանը, համալսարանի ՅՈՒՆԵՍԿՈ-ի Մարդու իրավունքների և ժողովրդավարության ամբիոնի վարիչ, ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Վալերի Դոդոյանը:

Բացման խոսքով հանդես եկավ Հայաստանում ՄԱԿ-ի ՀՏԿ ներկայացուցիչ Վալերի Տկաչուկը՝ խոսելով դասընթացի նպատակների և խնդիրների մասին: Նա ընդգծեց Մարդու իրավունքների կարևորագույն դերը ժամանակակից հասարակության համար՝ նշելով, որ այդ օրը պաշտոնապես մեկնարկում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 60-րդ տարեդարձին նվիրված Համաշխարհային քարոզարշավը, որի շրջանակներում աշխարհի տարբեր վայրերում հատուկ միջոցառումներով և գործողություններով կնշվի հռչակագրի հրեշտակները:

Դասընթացի թեմաները վերաբերում էին Մարդու իրավունքների տարբեր ոլորտների և Հազարամյակի զարգացման ութ նպատակների:



2007 թ. հոկտեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 10-ը շուրջ 40 ուսանողներ տարբեր համալսարաններից մասնակցեցին ՄԱԿ ՀՏԿ-ի, ՄԱԿ-ի, ՄԱԿ-ի ՓԳՀ-ի, Համաշխարհային բանկի, ՄԱԶԻԱՀ-ի և գործընկեր ՀԿ-ների Համալսարանական կրթության կամուրջ ասոցիացիայի, Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի, Հայաստանի Հեղինակյան կոմիտեի և Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի առաջատար մասնագետների կարդացած դասախոսություններին:

Սեփական լրատվություն

ՎԱՐՎԱՆՈՐԻ ՀԱՄԱՏՄԱՐԱԿ ԽՈՒՄՆԱԿՆԵՐԻ ՄԱՐԿԵՎ 13 ՕՐԿԱ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

(ԿԱՄ ՈՐՏԵՂԻՑ Է ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ 13 ՕՐԿԱ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ)

Հնուն տարբեր ժողովուրդներ Ամանորը տարբեր ժամանակ են տոնում:

Սարդուկյան պատմության մեջ մինչև բաբելոնյան աշտարակաշինություն տարեմուտը նշվում էր նիսան (ապրիլ) ամսվա 1-ին, քանզի ավանդության համաձայն՝ այդ օրը մեր նախահայր Արամի արարման սկիզբն է, իսկ «Ռիսան» բառը թարգմանաբար նշանակում է լինելություն, կազմություն:



ԽՈՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Երբ Աստված լեզուների զանազանության միջոցով շփոթության է մատնում մարդկանց, նրանք սիրովում են աշխարհով մեկ (հմծո. ԾՆՈՂ. ԺԱ 8), և տարեմուտը նիսան ամսվա 1-ին տոնելու սովորույթը պահպանվում միայն երեղի ընտանիքում՝ այդպիսով ավանդելով հրեաներին: Բացի այդ, երբ հրեա ժողովուրդը Աստծո նախահանությանը ազատագրվում է եգիպտական գերությունից ու ստրկությունից՝ Մովսեսի միջոցով առաջնորդվելով դեպի Ավետյաց երկիր, նույն օրն էլ Տիրոջ հրամանով հաստատվում է հրեաների տարեմուտը: «Այս ամիսը թող ձեզ համար ամիսների սկիզբ լինի, թող այն տարվա առաջին ամիսը լինի» (Ելք ԺԲ 2):

Ինչպես նշեցինք, բաբելոնյան աշտարակաշինությունից հետո ազգերի նախապետներն իրենց ընտանիքներով ճանապարհվում են դեպի իրենց համար նախասահմանված երկրները: Դրանից հետո ամեն ժողովուրդ, իր պատմության կարևորագույն իրադարձությունից ելնելով, տարեմուտի նշանակալից օր է հաստատում: Այդուհետև ամեն տարի տարեմուտի տոն հաստատված օրը մարդիկ շնորհավորում են միմյանց՝ աելոք: «Նոր օր, նոր տարի,

քանզի այս օրը հաստատվեցինք մեր երկրում, որ ժառանգեցինք»:

Օրինակ՝ եգիպտացիները տարեմուտը նշում էին օգոստոսի 29-ին (նոր տոմարով), պարսիկները՝ մարտի 21-ին, չինացիները՝ փետրվարի 6-ին, իսկ մենք՝ հայերս, նավասարդի 1-ին (օգոստոսի 11)՝ Հայկի և Բելի բանակների ճակատամարտի օրը: Ըստ ավանդության՝ այդ ճակատամարտը տեղի է ունեցել Ք. ա. 2492 թ. հայոց Չոր գավառում, որտեղ Հայկ նահապետը սպանել է Բելին՝ ազատություն շնորհելով իր տոհմին: Իսկ մեր հարևան վրացիներն ու աղվանները տարեմուտը նշել են մեզանից չորս օր հետո:

Եվ բնական է, որ ամանորյա միասնական օր չէր էլ կարող լինել, քանզի հին աշխարհի ժողովուրդների միջև առևտրա-տնտեսական, մշակութային, գիտական կապերն անհամեմատ թույլ

էին, և ամեն ժողովուրդ պարփակված էր իր կենցաղի, սովորույթների, հավատալիքների մեղ շրջանակներում: Հետևաբար՝ սովյալ երկրի աշխարհագրական դիրքով, ավանդույթներով և կենսամեղ պայմանավորված՝ տարբեր ժողովուրդներն ամանորյա տոնի նշան զանազան օրեր են հաստատել:

Ամանորը հունվարի 1-ին առաջին անգամ Ք. ա. 46 թ. տոնել են հռոմեացիները Հուլիոս կայսեր օրոք, ում հրամանով այդ շրջանում կազմվում է նոր տոմար, որն ուներ 365 օր, վեց ժամ: Այդ տոմարը, որն աշխարհի շատ երկրներում գործել է մինչև 19-20-րդ դդ., պատմության մեջ հայտնի է հուլյան տոմար անվամբ: Գիտնականների կարծիքով՝ հայերը

հուլյան տոմարին ծանոթ էին դեռևս Հուլիոս Կեսարի օրոք, սակայն պաշտոնապես ընդունել են 122 թ. թե արքունիքում, թե՛ քրմերի շրջանում: Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելուց հետո Աղանայի եկեղեցական ժողովում հուլյան տոմարին անցնելու որոշում է կայացվում, որը, սակայն, գործածվում է մեղ շրջանակներում, գործածվելու դեպքում էլ՝ անպայմանորեն հայոց տոմարի զուգարությամբ:

Նշենք, որ ըստ հուլյան տոմարի՝ տարին ուներ ոչ թե 365 օր, 5 ժամ, 48 րոպե, 46 վայրկյան, այլ 365 օր, 6 ժամ, այսինքն՝ 11 րոպե, 40 վայրկյանով ավելի երկար էր: Այս անշտոնությունը հարթելու նպատակով 16-րդ դարում Գրիգոր 18-րդ պապը եվրոպայի նշանավոր տոմարագետներին հրավիրում է Հռոմ՝ նոր տոմարի նախագիծ մշակելու համար: Բազմաթիվ նախագծերի ուսումնասիրության արդյունքում ընդունվում է Ալրիս Լիլիոյի նախագիծը: «Քանի որ հուլյան տոմարի 11 րոպեն, 40 վայրկյանի սխալը Ք. ա. 46 թվականից մինչև 1582 թվականը կուտակվել դարձել էր տասը օր, այսինքն՝ ժամանակը ստաք օր ետ էր ընկել, ուստի սխալ ուղղելու համար որոշվեց 1582 թ. հոկտեմբերի 4-ից հետո ոչ թե հոկտեմբերի 5-ն ընդունել, այլ հոկտեմբերի 15-ը» (Ռ. Համբարձումյան, Հայկական տոմար, Եր., 1992 թ.): Ի պատիվ Հռոմի Գրիգոր պապի՝ նոր տոմարը կոչվեց Գրիգորյան:

Հայ իրականության մեջ Գրիգորյան տոմարին են անցնում իտալահայերը 1584 թ. հունվարի 1-ին, ապա Ամստերդամի հայոց կաթոլիկ համայնքը՝ 1688 թ., Պոլսի հայոց կաթոլիկ համայնքը՝ 1697 թ., լեհահայ

համայնքը՝ 1783 թ. և այլն: 18-րդ դարում Սինեոն երևանցի կաթոլիկոսի հրամանով հայերի համար հունվարի 1-ը հաստատվում է որպես տարվա սկիզբ:

Գրիգորյան տոմարը շուրջ 340 տարվա ընթացքում ընդունում են աշխարհի գրեթե բոլոր երկրները, որոնցից վերջինը եգիպտոսն էր՝ 1928 թ. հոկտեմբերի 1-ին: «Ռուսաստանը նոր տոմարին է անցնում 1918 թ. հունվարի 1-ին, և քանի որ 1582 թ. մինչև



